ԱԻԴԱ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ

AZNAVOUR FOUNDATION

ԱԻԴԱ ԱԶՆԱՎՈՒՐ-ԿԱՌՎԱՐԵՆՑԻ 100-ԱՄՅԱ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

ՆԿԱՐԱԳԻՐ

Աիդա Ազնավուր-Կառվարենցի 100-ամյա տարեդարձի առթիվ «Ազնավուր» հիմնադրամը Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջի հետ համատեղ նախաձեռնում է անվանական կրթաթոշակների շնորհման ծրագիր:

Աիդա Ազնավուրը ֆրանսահայ երգչուհի է, Շառլ Ազնավուրի ավագ քույրն է և ֆրանսահայ հայտնի կոմպոզիտոր Ժորժ Կառվարենցի կինը: Աիդա և Շառլ Ազնավուրների համար մշտապես կարևոր դեր է ունեցել տաղանդավոր երիտասարդների շնորհների զարգացումը, նրանց մասնագիտական աճի խթանումը:

Չափը՝	450,000 դրամ *(որից 350,000 դրամը տրամադրում է «Ազնավուր» հիմնադրամը, 100,000 դրամը՝ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի քոլեջը)*

Անվանական կրթաթոշակի ծրագրի իրականացման միջոցով «Ազնավուր» հիմնադրամը հարգանքի տուրք է մատուցում արվեստի նվիրյալ Աիդա Ազնավուրին՝ շարունակելով տաղանդավոր երիտասարդների առաջխաղացման նրա առաքելությունը:

Կրթաթոշակի տեսակը՝	միանվագ
Տրամադրման ժամկետը՝	2023-2024 *ուսումնական տարի*
Քանակը՝	5 կրթաթոշակ
Շնորհման պայմանը՝	մրցութային

ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ

Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի քոլեջի այն ուսանողները, ովքեր՝

- 2023-2024 ուսումնական տարում հանդիսանալու են 2-րդ և բարձր կուրսերի ուսանողներ,
- սովորում են հետևյալ մասնագիտություններով՝
  - երգեցողություն,
  - էստրադային արվեստ
  - գործիքային կատարողական արվեստ
  - պարարվեստ
  - դերասանական արվեստ
- սովորում են գերազանց կամ բարձր առաջադիմությամբ
  (միջին որակական գնահատականը՝ 7,5-ից բարձր):

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կրթաթոշակի շահառուների ընտրությունը կատարվելու է երկու փուլով:

• ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ | ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

2023 Թ. ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՑ - ՀՈՒԼԻՍԻ 3

Կրթաթոշակի հավակնորդներից պահանջվում է՝

1. լրացնել առցանց դիմում-հայտ,
   (տեսնել քոլեջի կայքում և ֆեյսբուքյան էջում)
2. կից ներկայացնել ակադեմիական առաջադիմության թերթիկ և կարգապահական բնութագիր,
3. առկայության դեպքում տեղական/միջազգային մրցույթների, փառատոների, մշակութային այլ նախագծերի մասնակցության հավաստագրեր կամ պարգևներ:

Առցանց հայտադիմումները կարող են լրացվել հունիսի 20-ից (ժամը 10:00-ից) մինչև հուլիսի 3-ը (18:00-ն):

• ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ | ԼՍՈՒՄՆԵՐ

2023 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1 - 15

Առաջին փուլը հաղթահարած հավակնորդները կմասնակցեն լսումների, որոնց արդյունքում մասնագիտական հանձնաժողովը կընտրի կրթաթոշակի շահառուներին:

Լսումների անցկացման հետ կապված մանրամասները կներկայացվեն առաջին փուլը հաղթահարած հայտատուներին: